Պարոն/Տիկին Վ. Հակոբյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ
պարոն Մ. Մեսրոպյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ. Մեսրոպյան

«08» 09 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝** Արմեն Հունանյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Ռիադ, Սաուդյան Արաբիա, 2025 թվականի օգոստոսի 31-ից սեպտեմբերի 3-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Հեռահաղորդակցության միջազգային միություն (ITU):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից կազմակերպվող Կարգավորողների գլոբալ գագաթնաժողովին (GSR-25):

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ Կարգավորողների գլոբալ գագաթնաժողովը (GSR-25) 2000 թվականից ի վեր միավորում է աշխարհի տարբեր երկրների հեռահաղորդակցության և տեղեկատվական համակարգերի կարգավորող մարմինների ղեկավարներին և այն հանդիսանում է կարգավորողների տեսակետների և փորձի փոխանակման առանցքային հարթակ՝ խթանելով երկխոսությունը կարգավորող մարմինների, քաղաքականության մշակողների, արդյունաբերության առաջատարների և ՏՀՏ ոլորտի այլ հիմնական շահագրգիռ կողմերի միջև:

Միջոցառման ընթացքում կայացել է հեռահաղորդակցության ոլորտի ազգային կարգավորող մարմինների ղեկավարների կլոր-սեղանը, որի նպատակն էր քննարկել, թե

ինչպես են կարգավորող մարմինները հարմարվում և ինտեգրում նորարարությունները իրենց ինստիտուցիոնալ առաքելության հիմքում՝ օգնելով ձևավորել ճկուն և ապագային միտված թվային էկոհամակարգեր:

Վերոնշյալ քննարկմանն ընդառաջ մշակվել և քննարկման ընթացքում ընդունվել է «Կարգավորող մարմիններին, որպես թվային էկոհամակարգի կերտողներ, լիազորելու» թեմայով GSR լավագույն փորձի ուղեցույցը, որի քննարկման ընթացքում հանձնաժողովը ներկայացրել է իր դիտարկումները, որոնք տեղ են գտել ինչպես ITU GSR-25 կայքում (https://www.itu.int/itu-d/meetings/gsr-25/consultation/contributions/), այնպես էլ ներառվել են ուղեցույցում (կցվում է):

7.Հանդիպումները, ելույթները՝ Միջոցառման ընթացքում հանձնաժողովի ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել Բրազիլիայի ազգային կարգավորող մարմնի (ANATEL) և Բահրեյնի հեռահաղորդակցության կարգավորման մարմնի (TRA) ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության հնարավոր ուղղությունները և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաները, որոնք վերաբերում են 5G ցանցերի ներդրման զարգացմանը (ներառյալ ռադիոհաճախականության տիրույթների տրամադրման աճուրդներին, ռեսուրսների մեկնարկային գներին, գնագոյացմանը և օպերատորների նկատմամբ սահմանվող պարտավորություններին), արբանյակային կապի միջոցով մատուցվող հեռահաղորդակցության ծառայությունների կարգավորմանը (ներառյալ MSS ծառայությունները), 6 ԳՀց ռադիոհաճախականության տիրույթի օգտագործման ծրագրերին, հեռահաղորդակցության և այլ ենթակառուցվածքների համատեղ օգտագործմանը: Հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ՝ վերը նշվածի իրականացման ուղղությամբ գործնական քայլեր ձեռնարկելու վերաբերյալ:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Միջոցառման օրակարգի, դրա ընթացքում կայացած ելույթների և այլ մանրամասնաերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.itu.int/itu-d/meetings/gsr-25/programme/interactive-programme/:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Միջոցառման արդյունքներով պայմանավորված՝ առաջարկվում է շարունակել

մասնակցությունները Հեռահաղորդակցության միջազգային միության կողմից հետագայում կազմակերպվելիք գագաթնաժողովներին, հաշվի առնելով հեռահաղորդակցության ոլորտի զարգացման և կարգավորման լավագույն փորձի ուսումնասիրության առումով նման միջոցառումների կարևորությունը, ինչը հնարավորություն է ընձեռում՝ ըստ առաջնահերթությունների տեղայնացնել կարգավորման միջազգային փորձն ու բարձրացնել Հայաստանի Հանրապետության վարկանիշը նման հարթակներում: Միևնույն ժամանակ առաջարկվում է դիտարկել Բրազիլիայի և Բահրեյնի հեռահաղորդակցության ոլորտի ազգային կարգավորող մարմինների հետ համագործակցության խորացման հնարավորությունը՝ հաշվի առնելով վերոնշյա մարմինների փորձը հեռահաղորդակցության բնագավառի զարգացմանն ուղված միջոցառումների իրականացման մասով:

Գործուղվող ---------- 08.09.2025թ. ---------- ***Ա. Հունանյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 664-ՀՆ, 01.08.2025թ**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահ՝ Մեսրոպ Մեսրոպյան,

հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության պետ՝ Արմեն Հունանյան

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը՝ **ք.Ռիադ /Սաուդյան Արաբիա /**

5. Գործուղման ժամկետները **30.08.2025-04.09.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Մեսրոպ Մեսրոպյան	Արմեն Հունանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)	13,949	13,949	27.898
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	278,984	278,984	557.968
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը	5	5	
	Ընդամենը (դրամ)	321,248	324,605	645.853
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	130	130	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	49,863	49,863	
	Օրերի քանակը	6	6	
	Ընդամենը (դրամ)	299,177	299,177	598.354
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		913,357	916,715	1,830.072

Գլխավոր ֆինանսիստի

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ **08.09.2025թ.**